ԹԻՎ 15 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5 - Ա

« 26 » սեպտեմբեր 2024թ.

ք. Մեծամոր

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԹԵՄՈՒՐ ԹՈՌՈՒՆԻ ՔՅԱԼԱՇՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԹԻՎ 15 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 –Ի ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի թեկնածու Թեմուր Թոռունի Քյալաշյանը 2024 թվականի սեպտեմբերի 25 -ին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում, որը նոտարական կարգով վավերացված չէ:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Ընտրական օրենսգիրք) 114-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացնել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված՝ ինքնաբացարկի մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում է վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում:»:

Թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 26.09.2024թ. նիստին թեկնածու Թեմուր Թոռունի Քյալաշյանը ներկայացել է և հաստատել ինքնաբացարկի մասին իր դիմումը:

Ընտրական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝

1) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին.»:

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Թեմուր Թոռունի Քյալաշյանի կողմից 2024թ.սեպտեմբերի 25-ի

ներկայացրած ինքնաբացարկի մասին դիմումը՝ թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի թեկնածու Թեմուր Թոռունի Քյալաշյանի գրանցումը:

2. Թիվ 15 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 24 -ի «Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 20 -ի հերթական ընտրություններին համայնքի ղեկավարի թեկնածու գրանցելու մասին» թիվ 3-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

Թիվ 15 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ ***Մ. Հովհաննիսյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԸՀՀ N15